Ոչ պաշտոնական հրատարակություն

*«Վավերացնում եմ»*
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
*25 հոկտեմբերի 2006 թ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2006 թվականի N 1456-Ն

## 1156 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 2228-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի «Ռադիոսարքավորումների և հեռահաղորդակցության վերջնակետային սարքավորումների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 2228-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

որոշմամբ հաստատված հավելվածի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5 Սույն տեխնիկական կանոնակարգի 1-ին կետի «ե», «գ», «ը» և «թ» (բացառությամբ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 8525 20 910 ծածկագրին համապատասխան բջջային հեռախոսների՝ ներառյալ ավտոմեքենաներում տեղադրվողները) ենթակետերում նշված սարքավորումները ենթակա են համապատասխանության պարտադիր հավաստման»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության**
**վարչապետ** **Ա. Մարգարյան**

2006 թ հոկտեմբերի 20
Երևան